

ԱՔՍՈՐՅԱԼԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱԲՈԿՈՎԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ԱՄԱԼՅԱ ՍՈՂՈՍՈՒՅԱՆ

Հոդվածի նպատակն է էմիգրանտական գրականության համատեքստում քննության առնել աքսորյալի ինքնության առանձնահատկությունները: Տարիներ շարունակ միգրացիան և աքսորը դիտարկվել են որպես մետապատմական վտանգներ, սակայն քսաներորդ դարում միգրացիայի ծավալների աճի պատճառով դրանք դարձել են գրականության պատմության որոշիչ առանձնահատկություններից: Խնդիրը, որն ամենաշատն է քննարկվում էմիգրանտական գրականության համատեքստում, վերաբերում է անձնական, ազգային, մշակութային, կրոնական ինքնությանը: Անհատը, հայտնվելով օտար մշակույթում, բախվում է ինքնության վերահիմաստավորման խնդրին և ձեռք բերում հիբրիդային ինքնություն: Այդ խնդրին բախվում են նաև այն մարդիկ, որոնք ապրում են միգրանտների կողքին: Սեփական հայրենիքում նրանք իրենց երկրին նայում են օտար ու անձանոթ՝ էմիգրանտ գրողի աչքերով: Վերջինիս բացատրությունը շատ պարզ է. բոլորս ապրում ենք միգրացիայի դարաշրջանում և պոտենցիալ գաղթականներ ենք: Գրեթե բոլոր էմիգրանտ գրողները բախվում են սեփական «եսի» մասին պատկերացումների փլուզմանը: Էմիգրանտ գրողը սովորական էմիգրանտից տարբերվում է նրանով, որ վերադարձի հույսը նրան մոտեցնում է իր իդեալներին, որոնք ոգեշնչել են նրան ամբողջ կյանքում: «Տուն» հասկացության բացակայությունը հատկապես կարևոր է էմիգրանտ գրողների համար: Հաճախ նրանց չեն ընդունում սեփական երկրում, և հայրենիքը լքելուց հետո նրանք օտարական են դառնում թե՛ ներսում, թե՛ արտերկրում: Երբեմն գրողներին հաջողվում է հաշտեցնել և նույնիսկ միավորել տարբեր մշակույթներ: Ռուս գրող Վլադիմիր Նաբոկովն ԱՄՆ-ում դասավանդում էր ռուս գրականություն, թեև իր հայրենակիցներից շատերը մինչև հիմա չեն ներել նրան գաղթական դառնալու համար: Նախկին ստեղծագործական «եսի» պատրանքը, նրա՝ երբեմնի հաստատված գրական ինքնության անհետացումը վկայում են Նաբոկովի՝ ամեն ինչ նորից սկսելու ցանկության մասին. դա այն հնարավորությունն է, որն Ամերիկյան առաջարկում է բոլոր ներգաղթյալներին:

Բանալի բառեր – ինքնություն, աքսոր, վտարանդի, գաղթական, ներգաղթյալ, հիշողություն, հայրենիք, տեղահանում, հեռացում, վերադարձ

Նաբոկովի գրական ստեղծագործություններում ակներև է Ռուսաստանից աքսորվելու ցավը, և նկատելի է այն մշտական դրոշմը, որը թողել է աքսորը արվեստագետի հոգում: Ծագումով ռուս ամերիկացի

գրողի կարգավիճակը նրան ոչ միայն միջնորդ է դարձնում երկու մշակույթների միջև, այլև օգնում է հաշտեցնելու ներքին կոնֆլիկտը, որը ծագել է երկու լեզուներով գրելիս: Նաբոկովն իր ստեղծագործություններում իր տազնապան արտահայտում է իր հերոսների օգնությամբ, որոնց՝ իրականության հետ հաշտվելու փորձերը միշտ չէ, որ հաջողված են: Հետադարձ հայացք գցելով իր վաղ շրջանի գեղարվեստական գործերին՝ գրված Եվրոպայում «Վ. Սիրին» կեղծանունով, Նաբոկովը հայտարարել էր, որ Սիրինի «լավագույն գործերն այն գործերն են, որոնցում նա իր ժողովրդին միայնակ է թողնում իրենց հոգիների մենախցում»¹: Այս դատապարտումը դառնում է հեղինակի «ապրանքանիշը»՝ որպես պատասխան Ռուսաստանից իր արտաքսմանը: Նաբոկովը հասկացնում է, որ քաղաքական փոփոխություններն ավելի մեծ խնդրի միայն մի մասն են, և որ «շեշտը դրված չէ ռուսական հեղափոխության վրա: Դա կարող էր լինել ցանկացած բան՝ երկրաշարժ, հիվանդություն, աքսոր: Շեշտը դրված է փոփոխության կտրուկության վրա»²: Նրա կյանքի յուրաքանչյուր տեղափոխություն՝ Ռուսաստանից Եվրոպա, Եվրոպայից Միացյալ Նահանգներ և Միացյալ Նահանգներից վերադարձ Եվրոպա, պահանջում էր լուրջ հարմարվողականություն, բայց ցանկալի տեղափոխությունը՝ վերադարձը Ռուսաստան, այդպես էլ մնաց երազանք: Նրա գեղարվեստական հերոսները՝ աքսորյալները քաղաքացիություն չունեցող թափառականներն ու անբուժելի էքսցենտրիկները, չեն կարող գտնել իրենց տեղը շրջապատող աշխարհում՝ ընթացքում ավելի խճճվելով իրենց անհասանելի ցանկություններում և ընտրելով հիշողությունների մխիթարական աշխարհը, որը ոչնչի հարություն չի տալիս:

Վտարանդի լինելու հանգամանքն օգնում է գրողին ստեղծել «Պնին» (1957) և «Գունատ կրակ» (1962) վեպերի գլխավոր հերոսներին: Աքսորի մի քանի տեսությունների մասին պատմական ակնարկը կհիմնավորի, թե ինչու են այս վեպերի հերոսները՝ Պնինը և Քինբոտը, իսկական աքսորյալների առանձնահատկություններ դրսևորում և նկատելիորեն տարբեր տեսակետներ հայտնում տեղահանման վերաբերյալ:

Օքսֆորդի անգլերեն բառարանը սահմանում է աքսորը որպես «աքսորված մարդ. մեկը, ով ստիպված է եղել բնակվել իր հայրենի հողից հեռու»: Բառի ստուգաբանությունը ենթադրում է, որ աքսորը (exile) ծագում է լատիներեն ex(s)ul-ից, որտեղ ex-ը նշանակում է «դուրս», իսկ sal-ը՝ «գնալ»: Աքսորի վաղ արքետիպերից մեկը Օվիդիոսն է՝ հռոմեացի հայտնի բանաստեղծը, որին Օգոստոս կայսրը դատապարտեց իր վերջին օրերն անցկացնելու բարբարոսների շրջանում՝ Մև ծովի ափին: Ինչպես Օվիդիոսը, Նաբոկովը նույնպես հայրենագրկված արվեստագետ էր: Իհարկե նա չէր վտարվել ինքնիշխանի կողմից, այլ պատկա-

¹ Vladimir Nabokov, *Conclusive Evidence*, New York, 1951, p. 216-217.

² “Strong Opinions”, New York: Vintage Books, 1990. Print, p. 148.

նում էր ավելի մեծ գաղթական խմբի. նա աքսորվել էր Ռուսաստանից քսան տարեկանում և մինչև կյանքի վերջը՝ յոթանասունութ տարեկանը, մնաց աքսորյալ: Սովորաբար դա կոչվում է արտագաղթ (Էմիգրացիա). տերմին, որը լայնորեն նկարագրում է «հեղափոխությունից հետո զանգվածային արտագաղթը Ռուսաստանից»³: Վտարված հռոմեացու և աքսորված ռուսի համադրումը ցույց է տալիս, որ աքսորյալի կերպարը փոխակերպվել է դարերի ընթացքում և ներառում է փորձառությունների լայն շրջանակ: Հատկապես քսաներորդ դարի գրականությունը լի է բոլոր ռասաների աքսորված գրողների ստեղծագործություններով, որոնք հայտնի են իրենց բացառիկ անձնական փորձառություններով: Ինչ վերաբերում է Նաբոկովին, ապա աքսորի թեման առանձնակի տեղ է զբաղեցնում նրա ստեղծագործություններում, իսկ այն հարցին, թե ինչ նշանակություն ունի իր համար աքսորը, նա պատասխանել է. «Արվեստագետի այն տեսակը, որը միշտ աքսորի մեջ է, թեև երբեք չի լքել պայենական սրահը կամ հայրական տունը, հայտնի իրական գործիչ է, որի հետ ես որոշակի հարազատություն եմ զգում: Բայց ավելի ուղիղ իմաստով աքսորն արվեստագետի համար նշանակում է միայն մեկ բան՝ նրա գրքերի արգելում: Դա Ռուսաստանի, ոչ թե իմ կորուստն է»⁴:

Նաբոկովի կարծիքով՝ ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ ինքը տարիներ շարունակ գրկված է իր ընթերցողից:

Միակ մնայուն վիճակը, որն ունեն բոլոր արվեստագետները, ովքեր ստիպված են լինում բնակվել իրենց ծննդավայրից հեռու, Նաբոկովի մտերիմ ընկեր և գրականագետ Մերի ՄըքՔարթին սահմանում է որպես «սպասման վիճակ»⁵: Նա շեշտում է, որ այս վիճակը կախված է հայրենի երկրի մասին հիշողություններից և շարունակաբար ամրապնդվում է մի օր տուն վերադառնալու հույսով: Այնուամենայնիվ, Նաբոկովի հավատարմությունը Ռուսաստանի նկատմամբ փորձարկվում է զգացմունքային բեռից զերծ մնալու ցանկությամբ: «Ռուսաստանին» (1939) բանաստեղծության մեջ, որը գրվել է Փարիզում և հետագայում թարգմանվել անգլերեն, նա խնդրում է իր երկրին հանգիստ թողնել իրեն: Բանաստեղծը ստեղծում է հուզական խոշտանգման պատկեր, որը համարժեք է դանդաղ մահվան, երբ նրան անընդհատ հիշեցնում են այն վայրերի մասին, որոնք նա այլևս երբեք չի այցելի.

Ինձ մենակ կթողնե՞ս: Աղաչում եմ քեզ:

Մթնշաղը սարսափելի է: Կյանքի աղմուկները թուլանում են:

Ես անօգնական եմ: Եվ ես մեռնում եմ

Քո հեղեղված ալիքի կույր հայումից⁶:

³ **Tucker, Martin.** Literary Exile in the Twentieth Century: an Analysis and Biographical Dictionary. New York: Greenwood, 1991. Print.

⁴ “Strong Opinions”, էջ 118:

⁵ **McCarthy, Mary.** Occasional Prose. San Diego: Harcourt Brace Jovanovich, 1985. Print, p. 70.

⁶ “Poems and Problems”. New York: McGraw, 1970. Print, p. 1-4.

Իր երկրի մասին հիշողությունն առաջ է բերում բանաստեղծության հիմնական հարցը. բանաստեղծը տարիներ առաջ է որոշել հեռանալ Ռուսաստանից, այդ դեպքում ինչու Ռուսաստանը չի կարող նրան նույն լավությունն անել:

Նաբոկովը փնտրում է, բայց չի կարողանում բավարար հավասարակշռություն գտնել. նրա մի մասը ամուր կառչած է անցյալից, իսկ մյուս մասը հաջողությամբ հարմարվում է ներկային: Բանաստեղծությունն արտահայտում է երկու անհաշտ ցանկությունների հիասթափությունը՝ ազատվել սարսափելի հիշողություններից և խոսել կամ գրել իր սիրելի երկրի մասին: Նախ, բանաստեղծն իրավունք ունի, գուցե նույնիսկ պարտավոր է խոսել իր կորցրած երկրի մասին. «Նա, ով ազատ լքում է իր երկիրը՝ բարձունքների վրա լաց լինելու համար, ազատ է»⁷: Այնուամենայնիվ, Նաբոկովը նաև պատկերում է այն զոհաբերությունը, որին պատրաստ է ինքը Ռուսաստանի համառ ուրվականից ազատվելու համար. «Ես պատրաստ եմ ընդմիշտ թաքնված պառկել և ապրել առանց անվան: Ես պատրաստ եմ, որ մենք նույնիսկ երազներում չհանդիպենք, պատրաստ եմ կանխագուշակել բոլոր հնարավոր երազները, արյունաքամ լինել, հաշմանդամ դառնալ, մի կողմ գցել այն գրքերը, որոնք պետք է սիրեմ, փոխարինեմ այն ամենն, ինչ ունեմ՝ իմ սեփական լեզուն»⁸:

Բանաստեղծության փոքր-ինչ անհարթ ձևակերպումը պայմանավորված է Նաբոկովի ռուսերենից բոլոր թարգմանություններում «բառացիության» պնդմամբ. նույն բանաստեղծությունը ռուսերենում կատարելապես մեղեդային է: Բայց բանաստեղծի ուղերձը երկու լեզվով էլ նույնն է. գրողը ցանկանում է իր անցյալի հիշողությունները փոխանակել ներկայի խաղաղության հետ: Նա ուզում է, որ Ռուսաստանը հեռու մնա իր երազանքներից, մտքից և կյանքից. և, այնուամենայնիվ, այն բանի գիտակցումը, որ Ռուսաստանը երբեք չի լքի իրեն, բացատրում է այն դատարկությունը, որը նա զգում է՝ շարունակելով ապրել հայրենիքից հեռու:

Թաքերը այս հուզական վակուումը բնութագրում է որպես «կորստի գիտակցում»: Այս կորուստը փոխհատուցելու համար Նաբոկովը գրում է վեպեր՝ լի հիշողություններով այն երկրի մասին, որը նա ժամանակին գիտեր: Ռուսաստանից հեռանալու ողբերգությունն այն թեման է, որից նա չի կարող խուսափել, և նրա անձնական ցավերից մի քանիսն անխուսափելիորեն փոխանցվում են նույն տեսակի տառապանքներ դիմագրավող կերպարների կյանքին:

Արդյոք ը Նաբոկովին պետք է դիտարկել միայն որպես վտարանդի: Իր արտագաղթի այս երեք տարբեր ժամանակաշրջաններում: “A Guide to Exiles, Expatriates, and Internal Émigrés” («Աքսորյալների, գաղթականներ և ներքին գաղթականների ուղեցույց») (1972) էսսեում Մերի Մըք-

⁷ Նույն տեղում, էջ 5-6:

⁸ Նույն տեղում, էջ 9-16:

Քարթին առանձնացնում է գաղթականների մի քանի կատեգորիաներ, որոնք ներառում են արքայալների, փախստականների, գաղթականների և ներքին գաղթականների: ՄըքՔարթին իր տեսությունը կիրառում է Նաբոկովի նկատմամբ, որին տոտալիտար ռեժիմը վռնդել էր երկրից, ինչպես նաև՝ Ջեյմս Ջոյսի, որն ինքնակամ լքեց իր երկիրը քաղաքական տարաձայնությունների պատճառով, և Բորիս Պաստեռնակի, որն այդպես էլ չհեռացավ Խորհրդային Միությունից, թեպետ կառավարության կողմից փաստացի դատապարտվել էր ցմահ մեկուսացման: Պաստեռնակը, որին հնարավորություն էր տրվել հեռանալու Ռուսաստանից, հրաժարվել է արքայալ դառնալ. «Ես Ռուսաստանի հետ կապված եմ իմ ծնունդով, կյանքով և աշխատանքով: Ինձ համար հայրենիքից հեռանալը հավասարագոր կլինի մահվան»⁹: ՄըքՔարթին ակնարկում է այն ենթադրյալ խանդի մասին, որ վտարանդի Նաբոկովը պետք է որ զգացած լիներ ներքին փախստական Պաստեռնակի նկատմամբ, որը, չնայած իր ասելությանը խորհրդային ռեժիմի հանդեպ, այդպես էլ չլքեց երկիրը: Եթե Պաստեռնակը արքայալ նույնացնում էր մահվան հետ, Նաբոկովը գիտակցում էր արքայի ընձեռած հնարավորությունները: Այս խնդրահարույց թեմայի շուրջ հետաքրքիր քննարկման ժամանակ ՄըքՔարթին առաջարկում է, թե ինչպես կիրառել **արքայ** տերմինը. «Արքայալը սպասում է կառավարության կամ բռնապետի մահվանը, ինչը թույլ կտա իրեն վերադառնալ տուն: Եթե նա դադարի սպասել և սկսի հարմարվել նոր հանգամանքներին, ապա նա այլևս արքայալ չէ»¹⁰: Այս կոնկրետ սահմանումը միանշանակ չէ. արդյո՞ք այն նշանակում է, որ տարագիր համարվելու համար պետք է դիմադրել նոր մշակույթին ձուլվելու ցանկացած փորձի և ապրել կյանքը՝ մերժելով այն բոլոր հնարավորությունները, որոնք առաջարկում է նոր երկիրը:

ՄըքՔարթին ավելի է մանրամասնում իր տեսակետը, երբ գաղթականներին դասում է չորս տարբեր կատեգորիաների. 1. վտարանդի, որը «ըստ էության քաղաքական գործիչ է, թեև նրա կատարած հանցագործությունը կարող է լինել բարոյականության ոլորտում», 2. փախստական, որը չի կարողացել գիտակցաբար իր երկիրը լքելու որոշում կայացնել (ի տարբերություն վտարանդու) և «անօգնականության, անհասկանալիության մարմնացումն է», 3. արտագաղթած, որի «մեկնումը տեղի է ունեցել ինքնակամ», և որը պարզապես չի ցանկանում վերադառնալ իր երկիր, և 4. ներքին վտարանադի, որը, ինչպես Պաստեռնակը, «ներքին գաղթականի պես մի բան» է և հրաժարվում է լքել իր հայրենիքը՝ ինչ էլ լինի¹¹: Որքանո՞վ է ճշգրիտ նման դասակարգումը: Եվ ըստ ՄըքՔարթիի՝ ո՞ր կատեգորիայում է տեղավորվում Նաբոկովը: Երկրորդ հարցին պատասխանելը շատ ավելի հեշտ է, քան առաջինին.

⁹ Rowland, Mary and Paul Rowland, From another World. The Kenyon Review 33, 1960, p. 493.

¹⁰ McCarthy, Mary, նշվ. աշխ., էջ 69-70:

¹¹ Նույն տեղում, էջ 69-71:

ՄըքՔարթին պնդում է, որ Նաբոկովի ստեղծագործություններում արտորի իսկական շրջանը նրա ամերիկյան արտագաղթի ժամանակահատվածն է, որն ավարտվում է Եվրոպա մեկնելով: «Թվում է, թե հեղինակը, - գրում է նա, - ով ժամանակին Ամերիկայում ռուս արքայալ էր (այն ամենով հանդերձ, ինչ ենթադրում է կորուստ և վիշտ), վերածվել է ամերիկացի գաղթականի, որն ապրում է շվեյցարական լեռան գագաթին՝ «ամեն ինչից վեր»¹²: ՄըքՔարթիի գնահատականը լավ հիմնավորված է, բայց գուցե ոչ հեղինակավոր: Թեև Նաբոկովը գնահատում էր ՄըքՔարթիին որպես համակրելի և հավատարիմ ընթերցողի ու քննադատի, նա հաճախ անհամաձայնություն էր հայտնում ՄըքՔարթիին իր աշխատանքի վերաբերյալ:

Նաբոկովն ընդունում է արքայի յուրահատուկ մթնոլորտը, երբ բացատրում է, թե ինչու երբեք ռուսերենով այլ վեպ չէր գրի. «Արտագաղթի դարաշրջանը, կարելի է ասել, ավարտվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Մահացան հին գրողները, անհետացան նաև ռուս հրատարակիչները, և ամենավատը՝ տարագրության մշակույթի ընդհանուր մթնոլորտն իր շքեղությամբ, եռանդով, մաքրությամբ և արձագանքող ուժով թուլացավ և վերածվեց ռուսալեզու պարբերականների տաղանդով՝ անեմիկ, ոճով՝ գավառական»¹³:

Նա իր հիասթափությունն է հայտնում վտարանդի գրողների երիտասարդ սերնդից, որը չկարողացավ գնահատել վտարանդի մշակույթն ամբողջությամբ:

Չնայած սահմանափակումներին՝ ՄըքՔարթիի տեսությունն արժեքավոր պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես էին վտարանդիներն ընկալվում Նաբոկովին լավ ճանաչող մեկի կողմից: ՄըքՔարթին ցույց է տալիս այն հակասությունը, որն առաջացրել է «արքայ» տերմինը քսաներորդ դարում: Այնուամենայնիվ, արտագաղթողների վերաբերյալ նրա ընդհանրացված դասակարգումը և՛ պոտենցիալ ապակողմնորոշիչ է, և՛ հիմնականում անարդյունավետ: Աքսորված գրողների մասին իր մանրակրկիտ ուսումնասիրության մեջ Մարտին Թաքերը գրում է, որ ցանկացած կատեգորիա, որքան էլ գրավիչ լինի և «ուրվագծով ու վերլուծական տերմինաբանությամբ պարզ, հազվադեպ է բացարձակ՝ ելնելով փորձից»: Գրական արքայալների իր բառարանում ընդգրկվելիք հեղինակներին ընտրելիս Թաքերը տարբեր մոտեցումներ է դիտարկում՝ ծանրութթն անելով, թե ում կարելի է անվանել արքայալ: Օրինակ, նա չի կարող անտեսել «գրողներին, ովքեր վերադարձել են իրենց հայրենի երկիր», քանի որ, ըստ էության, նրանք «դեռևս համարվում են այս աշխարհի մի մասը տարագրության մեջ՝ հետևելով այն ենթադրությանը, որ արքայը չի անհետանում աշխարհագրության հետ. հիշողությունը պահպանվում է հոգեկանի ներ-

¹² Նույն տեղում, էջ 78:

¹³ “Strong Opinions”, էջ 37:

սում»¹⁴: Սա կատեգորիա է, որը ՄըքՔարթին հաշվի չի առնում: Նաբոկովի դժգոհությունը հանգեցրեց այն բանին, որ նա ընկալվի որպես օտար, որպես իր կանոններին հետևող գործիչ. «Ես ինձ դուրս մղեցի Ռուսաստանից այնքան եռանդուն, այնպիսի վրդովված ուժով, որ այդ ժամանակից ի վեր անընդհատ պտտվում եմ»¹⁵: ՄըքՔարթիի տեսության՝ որպես արքորի համընդհանուր բացատրության սահմանափակ լինելը չի ստվերում դրա արդիականությունը Նաբոկովի կյանքի և ստեղծագործության տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ դիտարկումներում:

АМАЛИЯ СОГОМОНЯН – Особенности личности Изгнанника на примере Владимира Набокова. – Целью данной статьи является рассмотрение характеристик идентичности в контексте мигрантской литературы. Миграция и изгнание долгое время считались метаисторической угрозой для писателей, но двадцатый век стал одной из определяющих, если не самой определяющей, чертой истории литературы из-за увеличения миграции. Проблема, о которой больше всего говорят в контексте иммигрантской литературы, связана с личной, национальной, культурной, религиозной идентичностью. Индивид, появляясь в чужой культуре, сталкивается с проблемой переосмысления идентичности и приобретает гибридную идентичность. С проблемой идентичности сталкиваются также те, кто живет рядом с мигрантами. У себя на родине они смотрят на свою страну глазами иностранного и никому не известного писателя-эмигранта. Объяснение последнего очень простое. Мы все живем в эпоху миграции, когда все мы являемся потенциальными мигрантами. Практически все писатели-эмигранты сталкиваются с проблемой краха представлений о собственном «я». Писатель-эмигрант отличается от обычного эмигранта тем, что он как будто возвращается домой, поскольку приближается к своим идеалам, которые вдохновляли его всю жизнь. Отсутствие понятия «дом» особенно важно для писателей-эмигрантов. Их часто не принимают в своей стране, и, покинув родину, они становятся иностранцами как дома, так и за границей. Иногда писателям удается примирить и даже объединить разные культуры. Набоков преподавал русскую литературу в США, знакомя американских студентов с великими русскими писателями, хотя многие соотечественники до сих пор не простили Набокову эмиграцию. Иллюзия прежнего творческого «я» Набокова, исчезновение его когда-то сложившейся литературной идентичности свидетельствует о стремлении Набокова начать все сначала. Это возможность, которую Америка предоставляет всем иммигрантам.

Ключевые слова: личность, изгнание, эмигрант, переселенец, иммигрант, память, родина, депортация, удаление, возвращение

AMALYA SOGHOMONYAN – Features of the Personality of an Exile on the Example of Vladimir Nabokov. – The purpose of this article is to examine the identity characteristics of the exiled in the context of migrant literature. Migration and exile have long been considered a meta-historical threat to writers, but the 20th century has become one of the defining (if not the most defining) features of the history of literature

¹⁴ **Tucker, Martin.** Literary Exile in the Twentieth Century: an Analysis and Biographical Dictionary. New York: Greenwood, 1991. Print.

¹⁵ «Strong Opinions», էջ 27:

due to increasing migration. The issue that is most talked about in the context of immigrant literature is related to personal, national, cultural, and religious identity. The individual, appearing in a foreign culture, faces the problem of reinterpretation of identity and acquires a hybrid identity. The problem of identity is faced also by those who live next to migrants. In their own homeland, they look at their country through the eyes of a foreign and unknown immigrant writer. The explanation of the latter is very simple. We all live in the age of migration, where we are all potential migrants. Almost all immigrant writers face the problem of the collapse of ideas about their own "self". An émigré writer differs from an ordinary émigré: as he approaches the ideals that have inspired him throughout his life, it feels like going back home. The lack of a "home" concept is especially important for immigrant writers. They are often not accepted in their own country; after leaving the homeland, they become foreigners both at home and abroad. Sometimes writers manage to reconcile and even unite different cultures. Nabokov taught Russian literature in the United States, introducing American students to great Russian writers, although many compatriots have not yet forgiven Nabokov for emigrating. The illusion of Nabokov's old creative "self", the disappearance of his once established literary identity, testifies to Nabokov's desire to start all over again. This is an opportunity that America offers to all immigrants.

Key words: *identity, exile, émigré, migrant, immigrant, memory, homeland, deportation, removal, return*